

Ի միաբանութենէ Սրբյն. Սաղիմա: Ի 1839ի 17 դեկտեմբերի»:

Ստիվ Սոլիտ փաշայի և վարչապետ հայազգի Պօղոս պէյ եռասուֆի համակրանքը շահելով յօգուտ աղքատաց ձեռք բերած է մեծատարած գեաիններ, որոնց արդիւնքով այսօր կը նպաստուորուին աղքատներն ու գարոցները: Ս. Յակօբի վանքին տնունով 1838ին, Աղեքսանդրիոյ մէջ կը գնէ Սալաճա Բեթրաքի չորս տուները, 1800 եզպտ. ոսկիի արժէքով, որ յետոյ 1900ին, 28,000 ոսկիի կը բարձրանայ, եւ կը վաճառուի ուրիշներուն, վանքին նոյն ժամանակի վարիչներու կողմէն:

ԳԱՅՐԻԷԼ ԼՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ. ՊՈԼՍԵՅԻ. — Հայրը՝ Գրիգոր էքմէքճի պաշի. Ծ. 1852ին Սկիւտարի մէջ. աշկ. Գատը գիւղի Փրէրներու գարոցին (1865-69): Կ'ուղևորի Փարիզ և կը հետևի Սորպոնի, Գոյիժ սը ֆրանսի, և Իրաւաբանական վարժ.ի դասերուն (1870-1875). կը հասնի Պոլիս նոյն թուականին և կ'ընտրուի նախ քարտուղար օսմ. արտաքին գործոց նախարարութեան իրաւաբանական նորակազմ գիւանին. յետոյ՝ արտաքին թղթակցութեանց սենեկին խմբագիր (1876-77). վարած է Միջազգային Բարձր Յանձնաժողովոյ անդամակցութեան և քարտուղարութեան պաշտօններ (1878-81). կը կարգուի Չէթինհէի օսմ. դեսպանատան Ա. քարտուղար (1881-82). Բ. գրան իրաւագէտ խորհրդական (1883). Հանրային Ծինութեանց և Արտաքին գործոց նախարարութիւններն յաջորդարար վարած է եւ կարգուած է ծերակուտական: 1885ին և 1894ին ընտրուած է Ատեւնապետ Ազգ. ժողովոյ և մասնակցած է քաղ. ժողովոյ և կարեւոր Յանձնաժողովներու: Նորատունկեան իր բոլոր պաշտօններուն մէջ մասնաւոր սէր մը ունեցած է Ս. Յակօբի վանքի մասին և պաշտպան հանդիսած է անոր իրաւանց և լաւագոյն խորհրդատուն եղած է անոր պաշտօնէութեան: 1912ին, ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակօբի վանքը և մեծարուած միաբանութեան կողմէն: 1914է սկսեալ հաստատուած է Բարիզ ու վարած է նաեւ Ազգ. Պատու իրակութեան նախագահութիւնը, Պօղոս փաշայի հրատարումէն վերջ. 1897էն սկսեալ Բարիզի մէջ հրատարակած է Recueil d'Actes internationaux de l'empire Ottoman խորագրով քանի մը հատորներ: